

քաղաքի, իսկ ի գեպս չլինելոյ պյնոցիկ, յայնժամ մնան յօգուտ նոյն  
իսկ եկեղեցւոյն

Յօդ. 24.

Ընկերութիւնն ունի զիւր սեպհական կնիքն մակագրութեամբ ։ Ինչ+  
համար ընդունվեած չունեցած է այս ուղարկութիւնն ։

### Հետագայ հաշուեցուցակի հրատարակութիւնը խնդրուած է:

#### ՀԱՇՈՒԵՑՈՒՅՈՒՆ

ՄՏԻՑ ԵԿ ԽԱԽՈԽԻՑ Ս. ԱԼԵՆԴՐԻՑԵԱԿ ՕՐԻՈՐԴ. ԳՊՐՈՑԻ ՇԱՄԱԽՈԽՈՑ

1880 թուից առ 17 Յունվարի 1881 ամի մնացել էր ուսումնարանապատկան մայր գումար Ս. Սանդիստեան Օրիորդական վարժարանի Ըամախույյ՝ մէ հաւաք ընդունած հինգ բարեկ երեսուն և երես հաւաք 1065 32
---

1881 թ. առելացած հաւաք.

Ստացուեց քսան ուչորս անդամներից տուրք իւրաքանչիւրից պահական բարեկ պահական բարեկ	240
Ստացուեց ութ ինաւ վալուչիներից տուրք իւրաքանչիւրից պահական բարեկ	40
Ստացուեց տոկոսադրամ ուսումնարանապատկան մայր գումարից	112
Գոյացան նուերներից և հանգանակութիւնից	33 30
Ստացուեց թոշակադրամ աշակերտութիներից	102 20
Ստացուեց օգուտ ի վաճառմանէ ուսումնարանապատկան իրեղինաց	5 41
<b>Գումար</b>	<b>1598 23</b>

#### Ծ Ա Խ Ք.

Տուաւ ուսուցչաց և վարժուհոյն վարձ	551	72
Տուաւ ծառային վարձ	38	20
Տուաւ ի զին այլ և այլ պիտոյից վասն ձեռագործութեան	2	95
Տուաւ ի զին վառելափայտի	41	38
Տուաւ ուսումնարանի տան տարեկան վարձ	159	96
<b>Գումար</b>	<b>794</b>	<b>21</b>
<b>Մուտք</b>	<b>1598</b>	<b>23</b>
<b>Ծախք</b>	<b>794</b>	<b>21</b>

Մնումէ գանձապահի մօտ ուսումնարանապատկան մայր գումար	804	2
---	-----	---

Հոգարարժութ. } Յ. Տ. Եսպիհան.  
Գեղարք կաճկաճեանց.

Նամախւոյ Ս. Սանդիստեան օրիորդական վարժարանի 1881 ամի մտից եւ ծախուց սոյն հաշուեցուցակից երեւումէ որ Նիրուանցու հաղորդած տեղեկութեան համեմատ, որ հրատարակուեցաւ Արարատի Յունիսի ամսատերում, արդարեւ յիշեալ վարժարանի յարգոյ Հոգարարժութիւնը անցեալ 1881 թուականի ընթացքում բաց ի տարեկան մուտքից մայր գումարից

ուս ծախսել է 261 ր. 30 կ.: Նոյն վարժարանի անցեալ տարիների հաշիւները առ ձեռն չունենալով, նոցա մասին ոչինչ ասել չենք կարող, միայն թպու ենք տալիս մեզ նկատել, որ եթէ յարգոյ Հոգաբար ձութիւնը այսուհետեւ եւս իւր գործը այսպէս վարելու լինի, մի քանի տարրուց յետոյ ամբողջ մայր գումարը բոլորովին կողառի եւ հետեւարար վարժարանի փակման դըժբաղդութեանը կը վիճակի ի դաւ ամենայն Անդամոց եւ Անդամու հետաց Ընկերութեան վարժարանի եւ ամենայն աղգայնոց:

Սորա մասին Հոգալու հրաւիրումենք յարգոյ Հոգաբարձուաց ուշագրութիւնը:

— — — — —

### ՀԱՅ ԳԵՂՋԱՌԻՀԻ.

Զով Մայիսն անցաւ, զերմ Յունիսն եկաւ,

Մեր հայ գիւղացու արտերը հասաւ,

Սա իւր եզները լծից արձակեց.

Ազատ շրջելու իրաւունք տուեց:

Ասաց, « Ճող նոքա քիչ հանգիստ մնան,

Ազատուին լծից, որ պարարտանան,

Մինչև որ մենք էլ արտերը հնձենք

Եւ կրկին նորանց լծի տակ բերենք: »

« Եմ սիրելի կին, ասաց գիւղացին,

Երիկունը մեր մանգաղ, գերանդին

Սրէ, պատրաստէ, որ ես էն զլիէն

Մեր Քէտ արտի հունձը սկսեմ»:

« Նորա հասկերը, ոսկու պէս փայլուն,

Վաղուց են հասել, հնձող են կանչում.

Մեզ որ օգնելու ուրիշ ոք չկայ,

Այդ հունձը միայն ինձ ու քեզ մնայ:

Կինն իսկոյն վազեց, պատից վայր բերեց

Երկու հատ մանգաղ, սրեց, պատրաստեց.

« Աչա ամեն ինչ, ասաց, պատրաստ է:

Վաղը մեր բազկի ուժերը փորձենք: »

Եւ երբ լուսացաւ, գիւղացին առաւ

Եւր սուր մանգաղն ու արտը գնաց.

Եսկ կինը տան գործերը վերջացրեց,

Առաւ ուժելիք, դէպ արտ շտապեց:

Սրի գիւղացին արտի մէջ մտած,

Ու նոր զօրութիւն, նոր ոյժ զգեցած,

Եւր սուր մանգաղն աջ ու ձախ կծգէր,

Հնձած որաներ խուրձ խուրձ կկապէր: